ՁԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ ԱՆՎՏԱՆԳ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

IOM UN MIGRATION

Միգրացիայի միջազգային կազմակերպություն

British Embassy Yerevan

Բրիտանական դեսպանատուն Երևանում

Պատրաստվել է հրապարակման Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելության կողմից:

Սույն գրքույկը հրատարակվել է Երևանում Բրիտանական դեսպանատան կողմից ֆինանսավորվող «Ամրապնդելով Հայաստանի աշխատանքային միգրացիայի կառավարման կարողությունները ի բարօրություն միգրանտների իրավունքների պաշտպանության և լավ կառավարման» Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների և Բրիտանական կառավարության պաշտոնական տեսակետների հետ:

Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հեղինակի և հրատարակչի նախնական գրավոր թույլտվության:

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպության Հայաստանի առաքելություն

© 2019 Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Միգրացիայի միջազգային
կազմակերպություն

British Embassy
Yerevan

Բրիտանական դեսպանատուն
Երևանում

Արդյո՞ք աշխատանքային միգրացիայի մեկնելու մտադրություն ունեք:

Ինչպե՞ս պետք է վարվել արտերկրում Ձեր անվտանգությունը պահպանելու համար:

ՁԵՐ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Խորհուրդներ անվտանգ միգրացիայի վերաբերյալ

Երևան 2019 թ.

Կարդացէք
այս գրքույկը

Շարժունությունը ժամանակակից աշխարհի կարևորագույն առանձնահատկություններից է, և աշխատանքային միգրանտները գլոբալ աշխատուժի ավելի ու ավելի կարևոր մասն են կազմում:

Միգրացիայի միջազգային կազմակերպության (ՄՄԿ) դիրքորոշումն այն է, որ կազմակերպված և լավ կառավարվող աշխատանքային միգրացիան ահռելի ներուժ է ծագման կամ ելքի և նպատակակետ կամ մուտքի երկրների կառավարությունների, համայնքների, միգրանտների, գործատուների և շահագրգիռ այլ կողմերի համար: Միևնույն ժամանակ գտնվելով արտերկրում միգրանտները կարող են հանդիպել բազում խնդիրների, հատկապես երբ նրանք այնտեղ ապրում են անկանոն կարգավիճակով կամ երբ պատշաճ կերպով տեղեկացված չեն իրենց իրավունքների և պարտականությունների մասին:

Նման իրավիճակը կանխելու համար անհրաժեշտ է հասկանալ ինչ միջոցներ են պետք ձեռնարկել մեկնելուց և արտերկիր ժամանելուց առաջ: Սույն գրքույկը մշակվել է այս խնդիրներին անդրադառնալու համար: Այն կօգնի Ձեզ լինել իրազեկված և պահպանել Ձեր անվտանգությունը նպատակակետ երկրում:

Միգրացիայի միջազգային կազմակերպությունը
Ձեզ հաջողություն է մաղթում:

Բովանդակություն

Ով է համարվում անկանոն միգրանտ 4

Որոնք են ականոն միգրացիային
առնչվող վտանգները 5

Երբ Ձեզ առաջարկում են աշխատել
արտերկրում 6

Եթե պատրաստվում եք վարձակալել
բնակարան 8

Տեղեկությունների ստացման պաշտոնական
հավաստի աղբյուրներ 10

Եթե արտերկրում հայտնվել եք
բարդ իրավիճակում 13

Առողջության պահպանություն 16

Ինչ է անհրաժեշտ իմանալ հայրենիքում և
արտերկրում առողջ մնալու համար 13

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բժշկական և
հոգեբանական խորհրդատվություն
տրամադրող կազմակերպություններ 19

Մարդկանց թրաֆիքինգ 20

Պետական մարմինները և
համագործակցող հասարակական
կազմակերպությունները,
որոնք լիազորված են ուղղորդել
թրաֆիքինգի զոհերին
Հայաստանի Հանրապետությունում 22

Ո՞վ է համարվում **անկանոն միգրանտ**

Յուրաքանչյուր պետություն ինքն է սահմանում իր երկրում օտարերկրացիների մուտքի և կացության դրույթներն ու պայմանները: Անկանոն միգրանտ են համարվում նրանք, ովքեր խախտում են հաստատված կանոնները, օրինակ.

- **Նրանք, ովքեր երկիր են մուտք գործում՝ ապօրինաբար հատելով պետական սահմանը:**
- **Նրանք, ովքեր երկիր են մուտք գործում և գտնվում են այնտեղ առանց համապատասխան փաստաթղթերի:**
- **Նրանք, ովքեր երկիր են մուտք գործում օրինական ճանապարհով, սակայն գերազանցելով կացության թույլատրելի տևողությունը՝ մնում են այնտեղ առանց օրինական թույլտվության:**
- **Նրանք, ովքեր աշխատում են առանց աշխատանքի թույլտվության կամ առանց աշխատանքային մուտքի արտոնագրի:**

Անկանոն կարգավիճակով միգրանտ
(irregular migrant)

Մուտքի թույլտվություն չունենալու, մուտքի պայմանները խախտելու կամ վիզայի ժամկետը լրանալու հետևանքով տարանցման և հյուրընկալող երկրում իրավական կարգավիճակ չունեցող անձ: Տվյալ սահմանումը տարածվում է նաև այն անձանց վրա, ովքեր օրինականորեն մուտք են գործել տարանցման կամ հյուրընկալող երկիր, սակայն մնացել են այնտեղ թույլատրված ժամկետից ավելի երկար կամ հետագայում առանց թույլտվության անցել են աշխատանքի (կոչվում են նաև լատենտային/փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտ կամ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտ): «Անօրինական» տերմինի փոխարեն նախընտրելի է օգտագործել «անկանոն» տերմինը, քանի որ առաջինն ունի քրեաիրավական երանգավորում և դիտվում է որպես միգրանտների մարդկային հատկանիշներին հակասող:

Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, 2-րդ հրատարակչություն, Միգրացիայի միջազգային կազմակերպություն, 2013թ,

Որոնք են

ականոն միգրացիային առնչվող վտանգները

- Հիասթափություն
- Դրամի կորուստ
- Ոչ պատշաճ աշխատանքային և կացության պայմաններ
- Վտանգ առողջության համար
- Ցածր աշխատավարձ
- Թրաֆիքինգ
- Արտաքսում երկրի տարածքից

Ի նկատի ունեցեք

Միգրանտ կանայք և երեխաները շատ ավելի խոցելի են, քան արական սեռի աշխատանքային միգրանտները, քանի որ նրանք կարող դառնալ են տարաբնույթ խտրականությունների վոհ:

Կանայք զրկված են պաշտպանությունից, քանի որ նրանք հիմնականում աշխատում են մասնավոր հատվածում որպես տնային աշխատողներ կամ խնամում են հիվանդներին, տարեցներին կամ երեխաներին՝ այսպիսով գտնվելով հասարակությունից մեկուսացված պայմաններում: Երբեմն այս մեկուսացումը կարող է ստեղծել վտանգավոր պայմաններ, որոնք հանգեցնում են տարատեսակ խտրական վերաբերմունքի դրսևորման և ներկայացնում են ավելի լուրջ ֆիզիկական և հոգեբանական վտանգ:

Երբ Ձեզ առաջարկում են աշխատել արտերկրում

Ձեզ կարող է վտանգ սպառնալ, եթե

- Ձեզ ստիպում են մեկնելու վերաբերյալ հապճեպ որոշում կայացնել,
- Ձեզ առաջարկում են արտասահմանյան երկիր մուտք գործել զբոսաշրջության կամ անձնական այցելության մուտքի արտոնագրով, կամ էլ առհասարակ առանց մուտքի արտոնագրի, բացառությամբ այն դեպքե-

րի, երբ միջպետական համաձայնագրերով ՀՀ քաղաքացիների համար այդ երկրներում առանց աշխատանքային թույլատվությամբ աշխատելու իրավունք է նախատեսված:

- Ձեզ հավաստիացնում են, որ նպատակակետ երկրի լեզվի իմացությունն անհրաժեշտ չէ, անհրաժեշտ չէ նաև մասնագիտական պատրաստվածության կամ աշխատանքային փորձի առկայությունը,
- Ձեզ խոսք են տալիս, որ գործատուի հետ պաշտոնական պայմանագիր կկնքվի արտասահմանյան երկիր Ձեր ժամանելուն պես,
- Ձեզ խորհուրդ են տալիս օգտագործել կեղծ փաստաթղթեր կամ Ձեզ ասում են, որ թույլ կտան վճարել Ձեր փաստաթղթերի պատրաստման և ճանապարհածախսերի դիմաց Ձեր ապագա աշխատավարձից,
- Ձեզանից վերցնում են Ձեր անձնագիրը:

Խուսափեք վտանգից և ճշտեք ստացած առաջարկի հավաստիությունը

- Նախքան արտերկիր աշխատանքի մեկնելը ստուգեք հրավիրող ընկերության գործունեության օրինականությունը:
- Մեկնելուց առաջ համոզվեք, որ Ձեզ հետ կնքվել է համաձայնագիր/պայմանագիր, որտեղ առկա է գործատուի կողմից ներկայացված պաշտոնական հրավեր:
- Անձամբ ճանաչեք Ձեր գործատուին (իմացեք կազմակերպության անվանումն ու հասցեն, անմիջական ղեկավարի կոնտակտները):
- Մի՛ տվեք ոչ ոքին Ձեր անձնագիրն ու այլ փաստաթղթերը: Փաստաթղթեր պահանջելը լուրջ հանցանք է համարվում:
- Անպայման կնքե՛ք աշխատանքային պայմանագիր առնվազն երկու բնօրինակով, որտեղ հստակ նշված կլինեն աշխատավարձի չափը, վճարման պայմանները,և պահանջեք պայմանագրի Ձեր բնօրինակը:
- Մի՛ կնքեք պայմանագիր, որը կազմված է Ձեզ համար անհայտ լեզվով. պահանջե՛ք թարգմանություն: Ուշադիր կարդացեք այն ամենն, ինչի տակ ստորագրում եք: Պահանջեք տալ դրանց պատճենները:
- Նախքան պայմանագիրը ստորագրելը խորհրդակցեք իրավաբանի հետ:

Եթե պատրաստվում եք վարձակալել բնակարան

- Կնքե՞ք բնակարանի վարձակալման պայմանագիր:
- Պահանջե՞ք ցույց տալ սեփականության իրավունքի, գրանցման վկայականի բնօրինակը և սեփականատիրոջ անձնագրային տվյալները:
- Պահանջե՞ք գրանցել Ձեզ բնակարանի հասցեով:
- Գործատուի հասցեով գրանցվեք միայն այնտեղ բնակվելու դեպքում:
- Ո՛չ ոքի գումար մի տվեք մինչև վարձակալման մասին պայմանագրի ստորագրումը և դրա օրինակի տրամադրումը:

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՀԻՇԵԼ.

- Աշխատանքային մուտքի արտոնագիր ձեռք բերելու համար արտասահմանցի գործատուն պետք է իր երկրի համապատասխան գերատեսչությունից ստանա աշխատանքի թույլտվություն և նախապես այն Ձեզ ուղարկի:
- Որպես կանոն, Դուք կարող եք արտերկրում օրինական հիմքով աշխատել, եթե մուտք եք գործում տվյալ երկիր աշխատանքային մուտքի արտոնագրով, բացառությամբ այն դեպքերի, երբ աշխատանքային մուտքի արտոնագրի առկայությունն ընդունող պետության կողմից անհրաժեշտ չէ ՀՀ քաղաքացիների համար, ինչպես, օրինակ, սահմանված է Եվրասիական տնտեսական միության մասին (ԵԱՏՄ) համաձայնագրով:
- Աշխատանքային մուտքի արտոնագիր ստանալու գործընթացն երկարատև է: Աշխատանքային մուտքի արտոնագիր ձեռք բերելու համար անհրաժեշտ է ներկայանալ նպատակակետ երկրի դիվանագիտական/հյուպատոսական ներկայացչություն:
- Զբոսաշրջության կամ այցելությունների մուտքի արտոնագիրը Ձեզ օրինական աշխատանքի իրավունք չի տալիս: Նման պարագայում Դուք ամբողջությամբ կախված կլինեք գործատուից: Հնարավոր է, որ զրկվեք բժշկական ապահովագրությունից և աշխատավարձից, կամ էլ ձերբակալվեք և վտարվեք երկրի տարածքից:
- Հարկավոր է տանը թողնել Ձեր անձնագրի և բոլոր փաստաթղթերի պատճենները: Խորհուրդ է տրվում կապ պահպանել Ձեր ընտանիքի անդամների հետ և հայտնել նրանց Ձեր գտնվելու վայրը: Միշտ Ձեզ մոտ պահեք Ձեր անձնագիրը և ունեցեք բավականաչափ գումար:

Տեղեկությունների ստացման

պաշտոնական հավաստի աղբյուրներ

Նախքան արտերկրում հաստատվելու համար տարատեսակ միջոցների դիմելը՝ խնդրում ենք ծանոթանալ ստորև նշված կայքէջերում ներկայացված տեղեկություններին:

- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալություն

  www.employment.am

- ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության միգրացիոն ծառայություն

  www.smsmta.am

- ՀՀ արտաքին գործերի նախարարություն

  www.mfa.am

Գտե՛ք և ուսումնասիրե՛ք հետևյալ տեղեկությունները.

- **Օգտակար տեղեկություններ արտասահմանում աշխատել ցանկացողների համար**
- **Օգտակար տեղեկություններ վերադարձողների համար**
- **Հայաստանի դեսպանություններ/հյուպատոսարաններ արտասահմանում** **www.mfa.am/filemanager/Statics/cat_arm.pdf**
- **Օտար պետությունների դեսպանություններ/հյուպատոսարաններ Հայաստանում** **www.mfa.am/filemanager/Statics/cat_arm.pdf**

Նպատակակետ երկրների վերաբերյալ տեղեկություններ կարելի է գտնել Միգրացիոն ռեսուրս կենտրոնում (ՄՌԿ):

ՄՌԿ, ք. Երևան

Գտնվում է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն համայնքների Զբաղվածության կենտրոնում՝ Խորենացի պողոտա 213 հասցեով:

(+374) 0 (10) **57 46 80**, **57 47 80**

ՄՌԿ, ք. Աշտարակ

Գտնվում է Աշտարակ քաղաքի Զբաղվածության կենտրոնում հետևյալ հասցեով՝ ք. Աշտարակ, Ներսես Աշտարակեցու փողոց 7, Արագածոտնի մարզ, 0201:

(+374) 0 (232) **3 52 33**, **3 52 93**

ՄՌԿ, ք. Արտաշատ

Գտնվում է Արտաշատ քաղաքի Զբաղվածության կենտրոնում՝ ք. Արտաշատ, Իսակովի փողոց, շենք 47 հասցեով:

(+374) 0 (235) **2 40 06**, **2 41 72**

ՄՌԿ, ք. Արմավիր

Գտնվում է Արմավիր քաղաքի Զբաղվածության կենտրոնում՝ ք. Արմավիր, Աբովյան 137 փողոց հասցեով:

(+374) 0 (237) **2 34 06**, **2 71 06**

ՄՌԿ, ք. Գորիս

Գտնվում է Գորիս քաղաքի Զբաղվածության կենտրոնում՝ ք. Գորիս, Մաշտոց 3 հասցեով:

(+374) 0 (284) **2 61 75**, **2 11 66**

ՄՌԿ, ք. Իջևան

Գտնվում է Իջևան քաղաքի Զբաղվածության կենտրոնում հետևյալ հասցեով՝ ք. Իջևան, Վասիլյան փողոց, Տավուշի մարզ:

(+374) 0 (263) **315 67**, **311 39**

ՄՌԿ, ք. Վայք

Գտնվում է Վայք քաղաքի Զբաղվածության կենտրոնում հետևյալ հասցեով՝ ք. Վայք, Շահումյան փողոց, 14 շենք, Վայոց Ձորի մարզ:

(+374) 0 (282) **2 26 61**

Միգրացիոն ռեսուրս կենտրոնների նպատակն է տեղեկացնել, կողմնորոշել և վերապատրաստել արտերկիր մեկնել և արտերկրում աշխատել նախապատրաստվող անձանց (հիմնականում աշխատանքային միգրանտներին), ինչպես նաև աջակցել նրանց վերաինտեգրմանը՝ վերադարձից հետո:

ՄՌԿ-ները տեղեկատվություն են տրամադրում.

(i) նպատակակետ երկրների և դրանց միգրացիոն և աշխատանքային օրենսդրության վերաբերյալ

(ii) արտասահման մեկնելու և այնտեղ բնակվելու հետ կապված ընթացակարգերի վերաբերյալ

(iii) կանոնավոր միգրացիայի հնարավորությունների և անկանոն միգրացիայի վտանգների վերաբերյալ

ՄՌԿ-ները տեղեկատվություն են տրամադրում նաև թափուր աշխատատեղերի վերաբերյալ ինչպես Հայաստանում, այնպես էլ այն երկրներում, որոնց հետ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունն ունի աշխատանքային պայմանավորվածություններ կամ երկկողմ/բազմակողմ աշխատանքային համաձայնագրեր:

Հայաստանում առաջին ՄՌԿ-ն ստեղծվել է Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից, որն հետագայում հանձնվել է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության զբաղվածության պետական գործակալությանը:

Եթե արտերկրում

դուք հայտնվել եք բարդ իրավիճակում

- Ձեր անձնագիրը վերցրել են,
- Ձեր տեղաշարժվելու ազատությունը սահմանափակվել է,
- Ձեզ արգելում են հեռախոսով խոսել Ձեր ընտանիքի անդամների հետ,
- Ձեր աշխատանքը չի վարձատրվում,
- Ձեզ սպառնում կամ նվաստացնում են,
- Ձեզ ստիպում են անել ինչ-որ բան Ձեր կամքին հակառակ,
- Ձեր գործատուն սպառնում է, որ կհանձնի Ձեզ տեղի իրավապահ մարմիններին վիզային ռեժիմը խախտելու համար:

Անհրաժեշտ է հիշել.

- **Չի կարելի հանդուրժել Ձեր մարդկային արժանապատվությունը նվաստացնող պայմանները:**
- **Օգնության համար, նախևառաջ, դիմեք ՀՀ դեսպանություն կամ հյուպատոսություն:**
- **Եթե դարձել եք անօրինական գործողությունների զոհ, ապա համառորեն պնդեք, որ Ձեզ տրվի մոտակա հայկական հյուպատոսության հետ կապ հաստատելու հնարավորություն:**
- **Անհրաժեշտության դեպքում դիմեք տեղի պետական մարմիններին, ոստիկանությանը, եկեղեցական կամ հասարակական կազմակերպություններին:**

Արտերկրում ներկայացված Ձեր երկրի դեսպանությունները, միջկառավարական և հասարակական կազմակերպությունները կարող են պաշտպանել Ձեր իրավունքները: Աշխարհի 172 երկրներում Միգրացիայի միջազգային կազմակերպությունն ունի ավելի քան 410 գրասենյակ և աջակցում է միգրանտներին կամավոր վերադառնալ հայրենիք:

Առողջության պահպանություն

- Ձևակերպե՛ք բժշկական ապահովագրություն նախքան աշխատանքի անցնելը աշխատանքային պայմանագիրը ստորագրելուց հետո՝ հյուրընկալ երկրի տարածքում գտնվելու ընթացքում բժշկական ծառայություններից օգտվելու համար:
- Արտերկիր մեկնելիս և հայրենիք վերադառնալիս հիշեք, որ անհրաժեշտ է հոգ տանել Ձեր և Ձեզ շրջապատող անձանց առողջության մասին:
- Տեղեկացե՛ք Ձեր առողջական վիճակի մասին: ՀՀ-ում անցե՛ք անվճար ՄԻԱՎ-ի թեստ և տուբերկուլոզի հետազոտություն:

Ի՞նչ է անհրաժեշտ իմանալ հայրենիքում և արտերկրում առողջ մնալու համար

1980-ական թվականներից ի վեր՝ ողջ աշխարհում պայքար է մղվում ՄԻԱՎ-ի (Մարդու իմունային անբավարարության վիրուսի) դեմ, որը հաճախ հիշատակվում է որպես ՄԻԱՎ/ՁԻԱՀ:

ՄԻԱՎ-ը կարող է մարդու օրգանիզմում երկար ժամանակ գտնվել նախքան ՁԻԱՀ-ի (Ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ) վերածվելը: ՄԻԱՎ-ը կարող է փոխանցվել սեռական ճանապարհով, օգտագործված ներարկային ասեղների համատեղ օգտագործման պատճառով, վարակված արյան փոխներարկման հետևանքով, ինչպես նաև կարող է փոխանցվել մորից մանկան հղիության, ծննդաբերության կամ կրծքով կերակրելու ընթացքում:

Մարդու օրգանիզմի կենսաբանական հեղուկները, ինչպիսիք են՝ թուքը, արցունքը, քրտինքը, կղկղանքը և մեզը վարակիչ չեն: Այսպիսով, ՄԻԱՎ-ը չի կարող փոխանցվել առօրյա գործողությունների կամ կենցաղային շփման արդյունքում: ՄԻԱՎ վարակակրին դիպչելը, նրա ձեռքը սեղմելը, նրան համբուրելը, նրա հետ գրկախառնվելը, նրա հետ նույն լողասենյակից և զուգարանից օգտվելը կամ նույն լողավազան հաճախելը, ինչպես նաև նույն պարագաներն օգտագործելը վարակիչ չէ: ՄԻԱՎ-ը չի փոխանցվում կենդանիների կծելուց (տնային կենդանիներ, օձեր, մոծակներ կամ այլ միջատներ) կամ ՄԻԱՎ վարակակիր հիվանդին խնամելու ընթացքում:

Սա նաև վերաբերում է սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություններին, ինչպիսիք են՝ գոնորեան, խլամիդիոզը և տրիխոմոնիազը:

Ինչպե՞ս է փոխանցվում ՁԻԱՀ-ը

ՁԻԱՀ-ի պատճառը ՄԻԱՎ-ն է: ՄԻԱՎ-ը տարածվում է հետևյալ ճանապարհներով.

- **չպաշտպանված սեռական հարաբերության արդյունքում,**
- **ՄԻԱՎ վարակակրի հետ նույն ներարկային ասեղից օգտվելու հետևանքով,**
- **վարակված մորից երեխային հղիության կամ ծննդաբերության ժամանակ,**
- **ՄԻԱՎ-ով վարակված կնոջ կողմից կրծքով կերակրելու ժամանակ:**

Եթե Դուք կարծում եք, որ կարող եք սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդության կամ ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վարակակիր լինել, Հայաստանում և արտասահմանում գործում են բժշկական հաստատություններ, որտեղ Դուք կարող եք խորհրդատվություն ստանալ կամ հետազոտություն անցնել՝ Ձեզ և այլոց պաշտպանելու նպատակով: Ճիշտ բուժում ստանալու դեպքում՝ սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունները կարող են բուժվել: Ցավոք, դեռևս պատվաստանյութ գոյություն չունի ՄԻԱՎ-ից պաշտպանելու համար, միայն զգուշությունն է, որ կարող է պաշտպանել Ձեր առողջությունը: Այնուամենայնիվ, գոյություն ունեն դեղամիջոցներ, որոնք կարող են երկարացնել ՁԻԱՀ ունեցող մարդու կյանքը:

Որտեղի՞ց կարելի է անհրաժեշտ տեղեկություններ ստանալ:

ՀՀ առողջապահության նախարարության ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոնը (ԿՀԿ) հանդիսանում է ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելմանն ուղղված գործունեության հիմնական իրականացնող ու համակարգողը Հայաստանի Հանրապետությունում: Կենտրոնում կատարվում են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի անվճար կլինիկական և լաբորատոր հետազոտություններ: Կենտրոնում ՄԻԱՎ և ՁԻԱՀ ունեցող հիվանդներին տրվում է հակառետրովիրուսային բուժում՝ հետագա վարակները կանխելու և բուժելու նպատակով, ինչպես նաև ապահովվում է մասնագիտացված բժշկական խնամք:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի վերաբերյալ բժշկական և հոգեբանական խորհրդատվություն տրամադրող կազմակերպություններ

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Հասցե՝ ք.Երևան 0040, Աճառյան 2

Հեռ.՝ (374) (0) 10 **61 07 30**, **61 71 07**

Թեժ գիծ՝ (374) (0) 10 **61 08 20**

Ֆաքս՝ (374) (0) 10 **61 57 46**

Կայքէջ՝ **www.armaids.am**

Էլեկտրոնային փոստ՝ **armaids@armaids.am**

«Առաքելություն արևելք»
մարդասիրական օգնության կազմակերպություն

Հասցե՝ ք. Երևան 0019, Պռոշյան փող. 10 շենք

Հեռախոս՝ (374) (0) 10 **26 44 40**, **26 44 70**

Կայքէջ՝ **www.miseast.org**

Էլեկտրոնային փոստ՝ **info@missioneast.am**

«Վորլդ Վիժն Ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ

Հասցե՝ ք. Երևան 0065, Ռոմանոս Մելիքյան 1, Մալաթիա-Սեբաստիա

Հեռախոս՝ (374) (0) 10 **74 91 18**, **74 91 19**

Ֆաքս՝ (374) (0) 10 **74 91 48**

Կայքէջ՝ **www.wvarmenia.am**

Էլեկտրոնային փոստ՝ **wvarmenia@wvi.org**

Մարդկանց թրաֆիքինգ

Եթե դուք մարդկանց թրաֆիքինգի զոհ եք դարձել, ապա մի վստահեք նրանց, ով Ձեզ սպառնում է՝ ասելով, որ Դուք եք ամեն ինչում մեղավոր, և ոչ ոք Ձեզ չի օգնի: Խիզախություն դրսևորեք և օգնության դիմեք:

Ձեր երկրում և արտերկրում գործող բազում կազմակերպություններ պատրաստ են օգնել Ձեզ:

Բարձրաձայնեք Ձեր խնդիրը

Հայաստանում զոհերի նույնականացման և ուղղորդման ողջ գործընթացը կարգավորվում է Մարդկանց շահագործման (թրաֆիքինգի) ենթարկված անձանց ազգային ուղղորդման կարգովով (ԱՈՒԿ): ԱՈՒԿ-ի շրջանակներում թրաֆիքինգի զոհերին առաջարկվում են մի շարք ծառայություններ, այդ թվում՝ կացարանի, բժշկական և հոգեբանական աջակցության տրամադրում, ինչպես նաև կրթական և ուսուցողական հնարավորություններ:

Պետական մարմինները և համագործակցող հասարակական կազմակերպությունները, որոնք լիազորված են ուղղորդել թրաֆիքինգի զոհերին Հայաստանի Հանրապետությունում

I. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐ

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Հայաստան, 0010, ք. Երևան, Հանրապետության հրպ.,
Կառավարական տուն 3
Հեռ.՝ (374) (0) 10 **52 68 31**
Կայքէջ՝ **www.mlsa.am**
Էլեկտրոնային փոստ՝ **info@mlsa.am**

ՀՀ արտաքին գործերի նախարարություն

Հայաստան, 0010, ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8
Հեռ.՝ (374) (0) 10 **54 40 41**, **52 35 31**
(374) (0) 60 **62 00 00**
Ֆաքս՝ (374) (0) 60 **62 00 62**
Կայքէջ՝ **www.mfa.am**
Էլեկտրոնային փոստ՝ **info@mfa.am**

ՀՀ առողջապահության նախարարություն

Հայաստան, 0010, ք. Երևան, Հանրապետության հրպ.,
Կառավարական տուն 3
Հեռ. (374) (0) 10 **58 24 13**
Կայքէջ՝ **www.moh.am**
Էլեկտրոնային փոստ՝ **info@moh.am**

ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Հայաստան, 0010, ք. Երևան, Հանրապետության հրպ.,
Կառավարական տուն 3
Հեռ.՝ (374) (0) 10 **51 13 62**, **51 13 54**
Կայքէջ՝ **www.mtad.am**
Էլեկտրոնային փոստ՝ **mta@mta.gov.am**

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն

ք. Երևան, 0001, Նալբանդյան փող. 104	
Հեռ.՝	(374) (0) 10 **56 35 15**
Կայքէջ՝	**www.sns.am**
Էլեկտրոնային փոստ՝	**ta@sns.am**

ՀՀ ոստիկանություն

ք. Երևան, 0025, Նալբանդյան փող. 130	
Հեռ.՝	(374) (0) 10 **52 43 02**, **52 16 82**
Կայքէջ՝	**www.police.am**
Էլեկտրոնային փոստ՝	**press@police.am**

II. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՄՔՈՐ Հայաստան

ք. Երևան, Կարապետ Ուլնեցու փող. 14	
Հեռ.՝	(374) (0) 10 **24 81 41, 28 29 77**
Ֆաքս՝	(374) (0) 10 **24 92 15**
Կայքէջ՝	**www.umcor.am**
Էլեկտրոնային փոստ՝	**umcor@umcor.am**

«Հույս և օգնություն» ՀԿ

ք. Երևան 0002, Պուշկինի փող. 37, բն. 5	
Հեռ.՝	(374) (0) 10 **53 48 34**
Ֆաքս՝	(374) (0) 10 **53 17 70**
Կայքէջ՝	**www.hopehelp.am**
Էլեկտրոնային փոստ՝	**info@hopehelp.am**

III. ԹԵԺ ԳԾԵՐ

Անվճար զանգեր Հայաստանում՝

(374) (0) 10 **800 50 550**, ՀՀ ոստիկանություն
(374) (0) 10 **800 80 801** «Հույս և օգնություն» ՀԿ
(374) (0) 10 **800 50 558** ԱՄՔՈՐ ՀԿ

Վճարովի զանգեր արտասահմանից՝

(374) (0) 10 **538 511** «Հույս և օգնություն» ՀԿ
(374) (0) 10 **286 879** ԱՄՔՈՐ ՀԿ

ԹԵԺ ԳԾԵՐ

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Թեժ գիծ (+374) 0 (10) **61 08 20**

Թրաֆիքինգի զոհերին ուղղորդում
Հայաստանի Հանրապետությունում

Անվճար զանգեր Հայաստանում `

(+374) 0 (10) **800 50 550**, ՀՀ ոստիկանություն

(+374) 0 (10) **800 80 801** «Հույս և օգնություն» ՀԿ

(+374) 0 (10) **800 50 558** ԱՄՔՈՐ ՀԿ

Վճարովի զանգեր արտասահմանից՝

(+374) 0 (10) **538 511** «Հույս և օգնություն» ՀԿ

(+374) 0 (10) **286 879** ԱՄՔՈՐ ՀԿ

ԹԵԺ ԳԾԵՐ

«ՁԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական կենտրոն»
պետական ոչ առևտրային կազմակերպություն

Թեժ գիծ (+374) 0 (10) **61 08 20**

Թրաֆիքինգի զոհերին ուղղորդում
Հայաստանի Հանրապետությունում

Անվճար զանգեր Հայաստանում `

(+374) 0 (10) **800 50 550**, ՀՀ ոստիկանություն

(+374) 0 (10) **800 80 801** «Հույս և օգնություն» ՀԿ

(+374) 0 (10) **800 50 558** ԱՄՔՈՐ ՀԿ

Վճարովի զանգեր արտասահմանից՝

(+374) 0 (10) **538 511** «Հույս և օգնություն» ՀԿ

(+374) 0 (10) **286 879** ԱՄՔՈՐ ՀԿ